ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Ռուզաննա Խաչատուրի Պապյանի «Հայաստանում երեխաների և դեռահասների շրջանում ոսկրամկանային սարկոմաների ապրելիության վրա ազդող պրոգնոստիկ գործոնների գնահատումը» թեմայով ԺԴ 00.08 – «Ուռուցքաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Մեր ուշադրությանն է ներկայացված արդիական և գիտական հետաքրքրություն ներկայացնող աշխատանք, նվիրված չարորակ նորագոյացությունների հազվադեպ, սակայն կլինիկական առումով առավել բարդ խմբերից մեկին՝ ոսկրամկանային սարկոմաներին: Չնայած դրանց համեմատաբար ցածր հանդիպելիությանը ընդհանուր ուռուցքաբանական հիվանդությունների կառուցվածքում, մանկական և դեռահասների ոչ-արյունաբանական չարորակ նորագոյացությունների շարքում դրանք կազմում են շուրջ 20%: Նույն բուժման մեթոդները բոլոր հիվանդների համար հավասարապես արդյունավետ չեն: Ոսկրամկանային սարկոմաների տարբեր ենթատեսակների դեպքում պահպանվում են բազմաթիվ չլուծված հարցեր՝ կապված բուժման օպտիմալ մեթոդների ընտրության, պրոգնոստիկ և պրեդիկտիվ գործոնների նշանակության, ինչպես նաև բուժման արդյունքների վրա ազդող համակարգային և կենսաբանական գործոնների հետ: Այդ պատճառով շարունակաբար իրականացվում են գիտական հետազոտություններ՝ ուղղված առավել արդյունավետ ախտորոշման և բուժման ռազմավարությունների մշակմանը, ինչպես նաև հիվանդության ելքի վրա ազդող գործոնների գնահատմանը:

Աշխատանքի շրջանակներում համապարփակ կերպով գնահատվել է ոսկրամկանային սարկոմաների բուժման ներկայիս իրավիճակը Հայաստանում՝ ներառյալ ախտորոշման հասանելիությունը, բուժման կազմակերպումը և առկա համակարգային սահմանափակումները:

Այս համատեքստում ներկայացված աշխատանքը առանձնանում է իր արդիականությամբ և գիտական արժեքով՝ նպատակ ունենալով գնահատել երեխաների և

երիտասարդների շրջանում ոսկրամկանային սարկոմաների ապրելիության վրա ազդող պրոգնոստիկ գործոնները:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. *Ուսումնասիրել հիվանդների կլինիկական և համաճարակաբանական առանձահատկությունները:*
2. *Պարզել պաթոմորֆոլոգիական առանձնահատկությունները*
3. *Գնահատել բուժված հիվանդների ապրելիության ցուցանիշները*
4. *Մշակել սահմանափակ ռեսուրսներին ադապտացված ոսկրամկանային սարկոմաների վաղ ախտորոշման և բուժման բարելավմանը միտված ընթացակարգեր*

Ռ.Խ.Պապյանի ատենախոսությունը բաղկացած է հապավումների ցանկից, ներածությունից, գրականության վերլուծությունից, հետազոտության նյութից և մեթոդներից, հետազոտության արդյունքներից, քննարկումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը շարադրված է 120 էջի շրջանակներում՝ ներառելով 37 գծապատկեր : Պարունակում է գրականության 116 սկզբնաղբյուր:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է գրականության վերլուծությանը, որի շրջանակներում հեղինակը հիմնավորում է աշխատանքի արդիականությունը: Համակարգված և մանրամասն ներկայացված են ոսկրամկանային սարկոմաների համաճարակաբանական տվյալները, դասակարգումը, ախտորոշման սկզբունքները և բուժման ժամանակակից մոտեցումները: Ամփոփված են նաև վերջին տարիների առավել կարևոր և ազդեցիկ հետազոտությունները՝ արտացոլելով թեմայի վերաբերյալ առկա գիտական պատկերացումները:

Գլուխը ընդհանուր առմամբ ներկայացված է համապարփակ և տրամաբանական կառուցվածքով՝ ընդգրկելով հետազոտության թեմային առնչվող հիմնական բոլոր հարցերը: Միևնույն ժամանակ, որոշ ենթաբաժիններում նկատվում է նյութի որոշակի ծավալայնություն և առանձին տվյալների վրա չափազանց մանրամասն կենտրոնացում, ինչը մասամբ ծանրաբեռնում է ներկայացումը:

Երկրորդ գլխում նկարագրվում են հիվանդների հավաքագրմանը ներկայացվող հիմնական պահանջները և իրականացված հետազոտության համար կիրառված հիմնական մեթոդները: Աշխատանքում ուսումնասիրվել են Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնում, ԵՊԲՀ «Մուրացան» հիվանդանոցում և Յոլյան արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնում 2008-2021թթ.-ը ոսկրամկանային սարկոմա ունեցող հիվանդների տվյալները: Հավաքագրվել և վերլուծվել են նրանց կլինիկոպաթոլոգիկ տվյալները, ստացած բուժման և հսկողության մասին տվյալները: Հետազոտության մեջ ընդգրկվել է 200 հիվանդ: Վիճակագրական վերլուծության մեթոդները ժամանակակից են և առարկություններ չեն առաջացնում: Գլուխն ամփոփ կերպով ներկայացնում է հետազոտությանն առնչվող ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Երրորդ գլուխը նվիրված է հետազոտության արդյունքներին: Գլխում մանրամասն վերլուծված են հետազոտության մեջ ընդգրկված հիվանդների կլինիկա-ախտաբանական բնութագրերը, հիվանդության տեղակայումները, կիրառված բուժման մեթոդները և դրանց արդյունքները: Ուսումնասիրվել են յուրաքանչյուր փուլում և տարիքային խմբում հիվանդների ապրելիության ցուցանիշները:

Ըստ կատարված վերլուծության արդյունքների՝ Հայաստանում ոսկրամկանային սարկոմաների հիվանդացության մակարդակը 100.000 բնակչի հաշվով առավել բարձր արձանագրվել է Արցախում՝ 10.6 դեպք, իսկ ամենացածրը՝ Կոտայքի մարզում՝ 1.1 դեպք:

Կատարված հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ արական սեռի ներկայացուցիչները հիվանդացել են 1.7 անգամ ավելի հաճախ: Հիվանդության լոկալիզացված ձևը Հայաստանում գերազանցել է միջազգային միջին ցուցանիշը 1.2 անգամ՝ կազմելով 71.5%:

Վիճակագրական վերլուծությունները թույլ են տվել առանձնացնել հիվանդների ապրելիության վրա ազդեցություն ունեցող հիմնական պրոգնոստիկ գործոնները, որոնցից առավել կարևոր են հիվանդության լոկալիզացված բնույթը, մինչև 18 տարեկան տարիքը և 90%-ից բարձր հետքիմիաթերապևտիկ նեկրոզի աստիճանը:

Բացի այդ հեղինակը այս գլխում վերլուծել է սարկոմաների հիմնական տեսակների ապրելիության ցուցանիշները: Հիվանդների տարբեր խմբերում 3-ամյա

ընդհանուր ապրելիության ցուցանիշները կազմել են՝ Յուինգի սարկոմայի դեպքում՝ 50%, օստեոսարկոմայի դեպքում՝ 55.6%, ռաբդոմիոսարկոմայի դեպքում՝ 57.1%, իսկ ոչ ռաբդոմիոսարկոմային փափուկ հյուսվածքային ուռուցքների դեպքում՝ 66.7%: Լոկալիզացված ձևերի դեպքում 3-ամյա ընդհանուր ապրելիությունը եղել է 2.5 անգամ ավելի բարձր՝ համեմատած մետաստատիկ ձևերի հետ: Առավել կարևոր է երրորդ գլխի այն բաժինը, որտեղ հեղինակը ամփոփում է, թե ինչ ազդեցություն է թողել մանկական քաղցկեղի կենտրոնացումը և պարտադիր կերպով մուլտիդիսցիպլինար քննարկումները ոսկրամկանային սարկոմա ունեցող հիվանդների ապրելիության և վարման վրա: Բուժման գործընթացի կազմակերպման և ադապտացված բուժական ընթացակարգերի ներդրման արդյունքում արձանագրվել է բուժումից հրաժարվողների թվի կրկնակի նվազում, իսկ մետաստատիկ ձևերի դեպքում 3-ամյա ընդհանուր ապրելիության ցուցանիշը բարելավվել է մոտավորապես 14%-ով:

Հետազոտության քննարկման բաժնում ամփոփվում են ստացված արդյունքները: Ապրելիության ցուցանիշները համեմատվում են մի շարք այլ զարգացող և զարգացած երկրների տվյալների հետ: Այստեղ մանրամասն վերլուծվում են ստացված արդյունքները և բերվում են դրանց հիմքում ընկած հնարավոր պատճառները՝ համապարփակ պատկերացում ստեղծելով ողջ հետազոտության վերաբերյալ:

Եզրակացությունները բխում են հետազոտության արդյունքներից և գիտականորեն հիմնավորված են:

Ատենախոսության սեղմագրում և հրատարակված գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրը կազմված է 22 էջից, ներառյալ ռուսերեն և անգլերեն համառոտ ամփոփումները: Հետազոտության շրջանակներում տպագրվել են 26 գիտական աշխատանքներ (12 հոդված և 14 թեզիս), առաջատար ամսագրերում, որոնք ունեն բարձր ազդեցության գործոն:

<u>Աշխատանքի վերաբերյալ կան որոշ դիտարկումներ.</u>

1. Հետազոտության որոշ ենթախմբերում հիվանդների քանակը համեմատաբար սահմանափակ է, ինչը մասամբ պայմանավորված է ոսկրամկանային սարկոմաների ընդհանուր հազվադեպ հանդիպելիությամբ: Այդ հանգամանքը կարող է որոշ չափով սահմանափակել առանձին ենթախմբերի միջև կատարված համեմատությունների վիճակագրական ուժը: Միևնույն ժամանակ, հեղինակն իրականացրել է համապատասխան վիճակագրական վերլուծություններ, ներառյալ բոթսթրեփ մեթոդի կիրառումը, ինչը թույլ է տվել ստացված արդյունքները գնահատել առավել հավաստի ձևով:

2. Աշխատանքում բավականին մանրամասն ներկայացված են ոսկրային սարկոմաների բուժման մոտեցումները և հատկապես օրգանապահպան վիրահատությունների կիրառումը: Միևնույն ժամանակ ցանկալի կլիներ ավելի լայնորեն ներկայացնել նաև փափուկ հյուսվածքային սարկոմաների վիրահատական բուժման առանձնահատկությունները, ինչը կարող էր լրացուցիչ ամբողջականություն հաղորդել աշխատանքի կլինիկական հատվածին: Այնուամենայնիվ, հասկանալի է, որ նշված տվյալների առավել մանրամասն ներկայացումը սահմանափակվել է ուսումնասիրված կլինիկական նյութի կառուցվածքով և աշխատանքի հիմնական նպատակների շրջանակով:

Ներկայացված դիտարկումները, սակայն, ամենևին չեն նսեմացնում կատարված աշխատանքի գիտական և գործնական արժեքը:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ «Հայաստանում երեխաների և դեռահասների շրջանում ոսկրամկանային սարկոմաների ապրելիության վրա ազդող պրոգնոստիկ գործոնների գնահատումը» թեմայով ներկայացված ատենախոսությունը հանդիսանում է արդիական, ծավալուն և բարձր գիտական մակարդակով կատարված աշխատանք: Ստացված արդյունքները հիմնավորված և հավաստի են, իսկ իրականացված հետազոտությունը ունի կարևոր գիտագործնական նշանակություն:

Ներկայացված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակը՝ Ռուզաննա Խաչատուրի Պապյանը, արժանի է ԺԴ.00.08 «Ուռուցքաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական

համալսարանի Ուռուցքաբանության ամբիոնի պրոֆ., բ.գ.դ.՝ Գ.Ա. Ջիլավյան

Գ.Ա. Ջիլավյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ:

ԵՊԲՀ Գիտական քարտուղար, պրոֆ., բ.գ.դ. ՝ Տ.Գ.Ավագյան

« 16 » մարտ 2026թ.